

պատմին: Իսկ նա, որ զգուրգէն փախչելու յորդորէր էր, իւր թելին կապոյտը ցոյց տալով.

– Տես՛ք,– կ'ըսէր,– սա մատներուն տեղը, եթէ քիչ մ'էլ տղմէր՝ ոսկորս կը փշրէր, ի՛նչ զարմանք եթէ այդչափ ուժ ունեցող մարդ այս կոտորածն ըրաւ:

Իսկ կոտորածը՝ չորս մեռեալ, երեք վիրաւոր էին, որ իրօք մեռելէ տարբերութիւն չունէինք վասնզի ոչ ոք մէջերնեն ապրանաց չէր. ոչ միայն իրենց վերքի ծանրութեան համար, այլ նաեւ անխնամ մնալէ զատ ձիւնին վրայ՝ պէտք էր որ անցնող, դարձողին ոտնահարութիւնն էլ ընդունէին: Ժամանակի՛ սովորութիւնը, որ դեռ մինչեւ հիմա ոչ միայն Ասիոյ այլեւ քաղաքականացեալ Եւրոպայի շատ տեղուանք թերեւս կը տիրէ:

Վանքը ետ թողուցին եւ ուղղուեցան դէպ ամուրը, որու բոլոր ժողովուրդը պատահարը լսելով գունդագունդ վար կ'իջնէր դիմաւորելու եկող խումբը, ուր քանի մը ձիաւորներու մէջէն կ'երթար բարձր ի գլուխ Մուշեղ՝ քանի որ իւր իշխանական գլխարկը գտեր գլուխը գրեր էին իւր հաւատարիմ հպատակները: Իսկ Գուրգէն քիչ մը հեռուէն կը հետեւէր դարձեալ ժողովրդէն շրջապատեալ՝ որ միշտ զօրութեան եւ յաջողութեան երկրպագուն է ամէն տեղ եւ ամէն ժամանակ:

Երբ Կ'անգուարի ժայռին գլխուն միջնաբերդին առջեւ հասան, որ իշխանական ընդարձակ ապարանը կը կազմէր, ժողովուրդը քիչ-քիչ սկսաւ ետ քաշուիլ եւ ցրուիլ: Իսկ ազատաց խումբը իւր սմբակաց արձագանքներով կը մտնէր պարսպաց ներքին դռնէն ներս ուր իշխանը պարտաւոր եալ էր կոտորել տալու, իւր ոտքին շղթան, որու բանալիքը չէին գտած, եւ հոնկից դիմեց իւր պալատը որպէսզի սփոփի իւր վերքերէն ու ցաւերէն:

Գուրգէն իւր Յուլակին վիճակը նախ ապահովեց, վասնզի աւելի կը վախէր թէ իշխանական պալատի մը մէջ անհանգիստ լինի կենդանին քան թէ գիւղացուոյ տան մը: Երբ իւր միմիայն շնչաւոր